ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԳԼՈՒԽ (*kephalē*)
SPECIAL TOPIC: HEAD (*kephalē*)

Աստվածաբանական մեծ քննարկումներ են եղել «գլուխ» (*kephalē*) տերմինի նշանակության շուրջ: Այս տերմինը կարելի է հասկանալ որպես՝

1. Եբրայերեն համարժեքն է *rosh* (BDB 910, KB 1164), որը կարող է նշանակել՝
   ա. գլուխ
   բ. գլխավոր
   գ. սկիզբ կամ ծագումնաբանություն (տես՝ Առ. 8:23, Ժող. 3:11, Ես. 41:4)
   դ. ընդհանուր հաշիվ (տես՝ *Հին Կտակարանի Աստվածաբանություն և Բացատրություն,* հատոր 3, էջ՝ 1015-1020)
2. LXX-ում *rosh* թարգմանվում է հունարենի հետևյալ բառերով՝
   ա. *archē* (սկիզբ, տես՝ Սաղմ. 137:6)
   բ. *prōtotokos* (առաջին, տես՝ 1 Մնաց. 5:12)
   գ. *kephalē* (գլուխ)
      1) մարդու գլուխ
      2) կենդանու գլուխ
      3) սարի գագաթ
      4) աշտարակի ծայր (տես՝ Մատթ. 21:42)
3. ՆԿ-ում *kephalē*
   ա. մարդու գլուխ (տես՝ 1 Կորնթ. 11:4,5,7)
   բ. կենդանու գլուխ
   գ. ամբողջ անձի համար օգտագործվող դարձվածք
   դ. սկիզբ կամ աղբյուր (տես՝ 1 Կորնթ. 11:3)
   ե. ամփոփում (տես՝ Հռոմ. 13:9)
   զ. առաջնորդ
      1) Հիսուսը բոլոր իշխանների և պետությունների գլուխն է, տես՝ Կող. 2:10
      2) Հիսուսը եկեղեցու գլուխն է (տես՝ Եփես. 4:15, 5:23, Կող. 1:18, 2:19)
   է. ամուսինը (տես՝ Եփես. 5:23)
      (տես՝ *Նոր Կտակարանի Աստվածաբանության Բառարան*, հատոր 2, էջ՝ 156-163)